ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱՃՆԻ ՄԵԾՆ ՄՈՒՐԱԴԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

2412, ք. Նոր Հա՝ճն, Շահումյան 1, Հեռ. (+374 224) 4 25 96, էլ.փոստ nhachn4@schools.am

№ 188/22 19 սեպտեմբերի 2022թ.

«Տարոն-ԳԳ» ՍՊԸ -ի
տնօրեն Գ.Գևորգյանին
ՀՀ Արագածոտնի մարզ, գ.Ն.Բազմաբերդ 15փ, 62
ՀՎՀՀ՝ 05028219
էլ.հասցե՝ taron.Baghramyan77@mail.ru

Հարգելի՝ պարոն Գևորգյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱՃՆԻ ՄԵԾՆ ՄՈՒՐԱԴԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Տարոն-ԳԳ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կապալառու) 15.06.2022թվականին կնքվել է դպրոցի ցանկապատի կառուցման /շարունակություն/ աշխատանքների ձեռքբերման պետական գնման պայմանագիր: Կապալառուն շինարարական աշխատանքները պետք է սկսեր 15.06.2022 թվականին և ավարտեր՝ 30.06.2022 թվականին՝ աշխատանքների ընթացիկ բնույթով պայմանավորված՝ առանց շինարարական թույլտվության:

Սակայն առ այսօր չի սկսվել որևէ շինարարական աշխատանք, խախտվել է պայմանագրի 3.1.4-ի ա) մասը, այն է. «3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար»:

Հիմք ընդունելով, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հավելված 1-ի 33-րդ մասի 4-րդ և 17-րդ կետերի դրույթներով՝ «ՆՈՐ ՀԱՃՆԻ ՄԵԾՆ ՄՈՒՐԱԴԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է «Տարոն-ԳԳ» ՍՊԸ -ի հետ 15-ը հունիսի 2022 թվականին կնքված թիվ ՀՀԿՈՏ-ՆՈՐ ՀԱՃՆ-Հ4ՀԴ-ԳՀԱՇՁԲ-22/14 պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու համար Կապալառուն պարտավոր է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձել տույժ՝ կատարման՝ ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով /95013 ՀՀ դրամ/ և Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը /11730 ՀՀ դրամի չափով/:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կապալառուն պարտավոր է 5 բանկային օրվա ընթացքում վճարել որակավորման ապահովումը՝ 351.907 /երեք հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր յոթ/ ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ 234.605 /երկու հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր հինգ/ ՀՀ դրամի չափով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Հ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ